ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԸ ԶԱՐԴԱՐՎԵՑ ՀԱՅԱԶԳԻ ՍՐԲԵՐԻՆ ՊԱՏԿԵՐՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐՈՎ

2005 թ. կառուցված առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու պատմությունն աստիճանաբար մարմնավորվում է՝ ի հարկի կահավորվելով, զարդարվելով և համալրվելով առաջնորդանիստ եկեղեցուն վայել սպասքով, եկեղեցական պարագաներով, անհրաժեշտ մաս կազմող առաջնորդական գահավորակով և նստարաններով: Եկեղեցին է՛լ ավելի առինքնող և գրավիչ դարձավ սուրբ խորանի որմնանկարներով: Թեմական առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ և նախաձեռնությամբ իրականացված աշխատանքների արդյունքում մեծանուն սրբի անունը կրող եկեղեցու սուրբ խորանը զարդարվեց գահին բազմած Հիսուս Քրիստոսի գրկաբաց բարձրադիր պատկերով, հայազգի սրբերի որմնանկարներով, նաև աջ և ձախ ավանդատների ճակատային մասում՝ Խաչելության և Համբարձման թեմաները պատկերող մեծադիր կտավներով:

Որմնանկարչությունը, որ գեղանկարչության վաղնջական շրջանի հայտնի ճյուղերից է, Հայաստանում տարածված է եղել դեռևս քրիստոնեության հաստատման առաջին իսկ դարերից: Այդ ժամանակաշրջանում կառուցվող եկեղեցիները պատկերազարդվել են աստվածաշնչյան թեմաների որմնանկարներով:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի վարդապետությամբ հաստատված և Ս. Թադեոս ու Ս. Բարդուղիմեոս առաքյալների կողմից հիմնված Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր երկհազարամյա պատմության ընթացքում բազում հայազգի սրբեր ունեցավ, սակայն մեր անկախացյալ Հայաստանում առաջին անգամ Վանաձորի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու խորանն է, որ զարդարվեց հայազգի գրեթե բոլոր հանրահայտ սրբերի մեծածավալ որմնանկարներով՝ Թադեոս, Բարդուղիմեոս առաքյալներից սկզբնավորվող սրբերի շարքը՝ համապատասխան հերթականությամբ ըստ ժամանակաշրջանների պատմական իրադարձությունները նշանավորող սրբերի պատկերներով (Հռիփսիմյանց կույսեր, Քրիստոնեության ընդունում, Հայոց գրերի գյուտ, Վարդանանք, հայրապետներ և թագավորներ):

Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցին պատկերազարդվեց սրբերի հիշատակը հավերժացնող ու Հայ Եկեղեցու պատմությունը անմահացնող արվեստի հրաշալի գործերով, որն իրականություն դարձավ Սեպուհ Սրբազանի մտահղացմամբ և բարերարությամբ Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի, գեներալ Լյովա Երանոսյանի, «Ա. Հակոբյան» ՍՊԸ տնօրեն Արթուր Հակոբյանի, ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանի, իսկ «Սեզամ-գազ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մխոյանի հովանավորությամբ «*Խաչելություն*» և «Լոռի» ռեստորանի տնօրեն Արտակ Ղազարյանի հովանավորությամբ՝ «*Համբարձում*» կտավները: Աշխատանքներն իրականացվեցին երևանաբնակ շնորհաշատ երիտասարդ նկարիչների կողմից՝ Լևոն Զեքյանի գլխավորությամբ, որոնք մասնագիտացել են մանրանկարչական արվեստում: Նախատեսվում է եկեղեցու պատկերազարդումների շարունակություն:

Կիրակի օրը, նոյեմբեր 11-ին, Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցում Ս. Պատարագի ընթացքում, ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի, կատարվեց որմնանկարների բարերարների մասնավոր օրհնության կարգ: Սրբազան Հայրն իր երախտագիտության խոսքը հղեց բոլոր բարերարներին և նրանց հանձնեց շնորհակալագրեր ու որմնանկարները պատկերող նկարներ:

Թեմի հոգևոր դասի և հավատացյալների անունից հայտնում ենք բոլոր բարերարներին մեր շնորհակալությունն ու երախտագիտությունը և մաղթում աստվածահաճո բազում գործերի իրականացում:

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ